



Համարը
Տիպը Կոնվենցիա
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 29.01.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 09.02.2016
Ստորագրման ամսաթիվը 09.02.2016
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՀՀ ԵՎ ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Շվեդիայի Թագավորությունը, ձգտելով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիա, համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր Պայմանավորվող պետություններից մեկի կամ միաժամանակ երկուսի ռեզիդենտ են:
2. Այն դեպքում, երբ անձի կողմից կամ նրա միջոցով ստացվող եկամտի տեսակը, որը, Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն, հարկման առումով թափանցիկ է, այդ եկամտի տեսակը կրիտարկվի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված եկամուտ, բայց միայն այն չափով, որքանով այն այդ պետության հարկային օրենսդրության նպատակների համար կհամարվի ռեզիդենտի եկամուտ:

**Հոդված 2
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ**

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների կողմից եկամտից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:
2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում ընդհանուր եկամտի, գույքի ընդհանուր արժեքի կամ եկամտի կամ գույքի տարրերի նկատմամբ կիրառվող բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների հարկերը, ինչպես նաև գույքի հավելաճից գանձվող հարկերը:
3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես.
 - ա) Հայաստանում՝
 - i) շահութահարկ,
 - ii) եկամտահարկ,
 - iii) գույքահարկ,
 (այսուհետ՝ հայկական հարկ).
 - բ) Շվեդիայում՝
 - i) սագային եկամտահարկ (den statliga inkomstskatten),

- ii) աղբյուրի մոտ պահվող հարկ շահաբաժիններից (kupongs katten),
 - iii) ոչ ռեզիդենտի եկամտահարկ (den s arskilda inkomsts katten f or utomlands bosatta),
 - iv) ոչ ռեզիդենտ արտիստների և սալտանների եկամտահարկ (den s arskilda inkomsts katten f or utomlands bosatta artister m.fl.),
 - v) համայնքային եկամտահարկ (den kommunala inkomsts katten) և
 - vi) զուտ հարստության հարկ (statlig f orm ogenhets katt),
- (այսուհետ՝ շվեդական հարկ):

4. Սույն Կոնվենցիան կկիրառվի նաև բոլոր՝ համանման կամ էսպես նման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն 3-րդ պարբերությամբ նշված հարկերի, կամ՝ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կծանուցեն իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

Հոդված 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում.
- ա) «Պայմանավորվող պետություն» կամ «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Շվեդիա,
 - բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն,
 - գ) «Շվեդիա» տերմինը նշանակում է Շվեդիայի Թագավորություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, ներառում է Շվեդիայի ազգային տարածքը, տարածքային ծովը, ինչպես նաև այլ ծովային տարածքները, որոնց նկատմամբ Շվեդիան իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ միջազգային իրավունքի համաձայն,
 - դ) «անձ» տերմինը նշանակում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,
 - ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,
 - զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,
 - է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները, համապատասխանաբար, նշանակում են՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,
 - ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,
 - թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.
 - i) Հայաստանում՝ ֆինանսների նախարարություն կամ վերջինիս լիազորած ներկայացուցիչ,
 - ii) Շվեդիայում՝ ֆինանսների նախարար, նրա կողմից լիազորված ներկայացուցիչ կամ մարմին, որը նշանակվել է որպես իրավասու մարմին սույն Կոնվենցիայի նպատակների համար,
 - ժ) «քաղաքացի» տերմինը Պայմանավորվող պետության առումով նշանակում է.
 - i) ցանկացած ֆիզիկական անձ, ով ունի Պայմանավորվող պետության քաղաքացիություն, և
 - ii) ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ընկերակցություն, որն իր այդ կարգավիճակն ստացել է այդ Պայմանավորվող պետության գործող օրենքների համաձայն,
 - ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը նշանակում է՝ մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացում:

2. Պայմանավորվող պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նա ունի այդ պահին՝ այդ Պետության օրենքի համաձայն, այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ Կոնվենցիան կիրառվում է. ընդ որում՝ այդ Պետության կիրառելի հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

Հոդված 4
ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, ով, այդ Պետության օրենքների համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր բնակության,

ռեզիդենտության, ստեղծման վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանուն չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը և դրա ցանկացած՝ կառավարական մարմին կամ գործակալություն, քաղաքական ստորաբաժանում կամ տեղական իշխանություն: Մակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, ով ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի մասով:

2. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է կամ չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա երկու Պետությունների քաղաքացի է կամ դրանցից և ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, 1-ին կետի դրույթների հիման վրա, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխադարձ համաձայնությամբ որոշել, թե սույն Կոնվենցիայի նպատակների համար այդ անձը ո՞ր Պայմանավորվող պետության ռեզիդենտ պետք է համարվի: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում անձը չի համարվում Պայմանավորվող պետություններից և ոչ մեկի ռեզիդենտ՝ Կոնվենցիայիով նախատեսված ցանկացած արտոնություն պահանջելու նպատակների համար, բացառությամբ 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ ձեռնարկատիրական գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է, մասնավորապես.

ա) կառավարման վայրը,

բ) մասնաձյուղը,

գ) գրասենյակը,

դ) գործարանը,

ե) արհեստանոցը և

զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, եթե դրանց տևողությունը ինը ամսից ավելի է:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես *ա-է* ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության կայուն վայրի պահման ընդհանուր գործունեությունը այդ համակցության արդյունքում շարունակվում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, եթե անկախ կարգավիճակով գործակալից տարբեր անձը, որի

նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար իրականացնում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, սպա այդ ձեռնարկությունը համարվում է այդ Պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար ձեռնարկվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ գործունեության կայուն վայրը չի վերաճում մշտական հաստատության՝ այդ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ նա այդ Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, առևտրային ընդհանուր գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

**Հոդված 6
ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, շինությունները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, մակույկները և օդանավերը չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

**Հոդված 7
ՇԱՀՈՒՅԹ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, սպա այդ շահույթը, որը, սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն, վերագրելի է այդ մշտական հաստատությանը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սույն հոդվածի և Կոնվենցիայի 22-րդ հոդվածի նպատակներով՝ շահույթը, որը յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում վերագրելի է 1-ին ենթակետում նշված մշտական հաստատությանը, համարվում է այն շահույթը, որը ենթադրվում է ստանալ, մասնավորապես, կազմակերպության այլ ստորաբաժանումների հետ իրականացված գործարքների մասով, եթե դա եղել է առանձին կամ անկախ կազմակերպություն, որն իրականացրել է նման կամ նմանատիպ գործունեություն, նման կամ նմանատիպ պայմաններում՝ հաշվի առնելով ձեռնարկության՝ մշտական հաստատության կամ ձեռնարկության այլ ստորաբաժանումների միջոցով իրականացրած գործառնությունները, օգտագործած ակտիվները և ստանձնած ռիսկերը:

3. Այն դեպքում, երբ, 2-րդ կետի համաձայն, Պայմանավորվող պետությունը ճշգրտում է շահույթը, որը վերագրելի է Պայմանավորվող պետություններից մեկում գտնվող ձեռնարկության մշտական հաստատությանը, և հարկում է, համապատասխանաբար, ձեռնարկության այն շահույթը, որը հարկվել էր մյուս Պայմանավորվող պետությունում, մյուս Պայմանավորվող պետությունը անհրաժեշտության դեպքում կրկնակի հարկումը վերացնելու համար կատարում է համապատասխան ճշգրտումներ, եթե համաձայն է նշված առաջին Պայմանավորվող պետության կողմից կատարված ճշգրտմանը: Եթե մյուս Պայմանավորվող պետությունը համաձայն չէ Պայմանավորվող պետության կողմից կատարված ճշգրտմանը, սպա Պայմանավորվող պետությունները պետք է ձգտեն վերացնել ցանկացած կրկնակի հարկում փոխադարձ համաձայնության միջոցով:

4. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

**Հոդված 8
ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:
2. Սկանդինավյան ավիատոլիների համակարգ (SAS) օդային փոխադրումների կոնսորցիումի ստացած շահույթների նկատմամբ 1-ին կետով նախատեսված դրույթները կիրառվում են միայն շահույթների այն մասով, որը համապատասխանում է այդ կոնսորցիումի մեջ SAS Sverige AB-ի՝ Սկանդինավյան ավիատոլիների համակարգում (SAS) շվեդական մասնաբաժնին:
3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորման մեջ, համատեղ գործունեության մեջ կամ միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

**Հոդված 9
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Այն դեպքում, երբ.
 - ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, կամ
 - բ) նույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլինի նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:
2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթում ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը պետք է հաշվեգրված լինի առաջինը նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին նույնպիսին, ինչպիսին կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը համարում է ճշգրտումը արդարացի: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

**Հոդված 10
ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժինները կարող են նաև հարկվել այդ Պետությունում՝ այդ Պետության օրենքների համաձայն. սակայն եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձված հարկը չի կարող գերազանցել՝
 - ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը ընկերություն է (այլ, քան գործընկերություն).
 - (i) ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը,
 - (ii) այդ ակտիվները տնօրինում է առնվազն երկու տարի՝ մինչև սույն ենթակետի համաձայն որևէ պահանջ ներկայացնելը,
 - (iii) այդ ընկերությունը ազատված է շահաբաժինների հարկումից,
 - բ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը ընկերություն է (այլ, քան գործընկերություն), որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժինները վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը,
 - գ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:
 Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև՝ եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է հարկային կարգավորման այնպես, ինչպես բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման չբաշխված շահույթից զանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

**Հոդված 11
ՏՈԿՈՍՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն մի Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները կարող են հարկվել նաև այդ Պետությունում՝ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով զանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ 1-ին կետում նշված տոկոսները հարկման ենթակա են միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է տոկոսների փաստացի սեփականատերը, եթե բավարարվի հետևյալ պահանջներից որևէ մեկը.

ա) տոկոսների վճարող կամ ստացող է հենց Պայմանավորվող պետությունը, նրա կառավարական մարմինը կամ գործակալությունը, քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ Պայմանավորվող պետության կենտրոնական բանկը,

բ) տոկոսները վճարվում են կամ երաշխավորվում են շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA), շվեդական արտահանման վարկավորման կազմակերպության (SEK), Միջազգային AB շվեդիկինստրամի, շվեդական արտահանման վարկավորման երաշխիքային հիմնադրամի (Exportkreditnämnden) կամ յուրաքանչյուր Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի այլ պետական բնույթի հաստատության կողմից, որի նպատակն է խրախուսել արտահանումը կամ զարգացումը:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից՝ անկախ այն բանից՝ ապահովվա՞ծ են գրավով, թե ոչ, և անկա՞մ է, թե ոչ պարտապահի շահույթում մասնակցության իրավունք, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար զանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ:

Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

**Հոդված 12
ՌՈՅԱԼԹԻՆԵՐ**

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն Պայմանավորվող պետությունում առաջացող ռոյալթիները կարող են հարկվել նաև այդ Պետությունում՝ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում գրական, արտիստիկ կամ գիտական աշխատանքների, ներառյալ՝ կինեմատոգրաֆիական ֆիլմերի և ռադիո- կամ հեռուստատեսային հեռարձակման համար ֆիլմերի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, ցանկացած պատենտի, սպրանքային նշանի, դիզայնի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հաստիք հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

**Հոդված 13
ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելվածը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելվածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

Սկանդինավյան ավիատրոնների համակարգ (SAS) օդային փոխադրումների կոնսոլիդացիայի ստացած շահույթների նկատմամբ սույն կետի դրույթները կիրառվում են միայն այդ կոնսոլիդացիայի մեջ SAS Sverige AB-ի՝ SAS-ում շվեդական գործընկերոջ մասնակցությանը համապատասխանող շահույթների մասով:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի օտարումից ստացված արժեքի հավելվածը, որի արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելվածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույքն օտարողը:

6. Չնայած 5-րդ կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացած անձի կողմից, ով դարձել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ընկերությունում բաժնետոմսերի կամ այլ իրավունքների կամ

գործընկերությունում տոկոսների օտարումից ստացված շահույթը կարող է հարկվել առաջինը նշված Պետությունում, եթե գույքի օտարումը կատարվել է այն ամսաթվին հաջորդող 7 տարվա ընթացքում՝ ցանկացած ժամանակ, երբ անձը դադարել է լինել առաջինը նշված Պետության ռեզիդենտ:

**Հոդված 14
ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ**

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի աշխատանքը չի կատարվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է այդ կերպով, դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող հարկային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի վրա կամ օդանավում կատարվող աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում: Այն դեպքում, երբ Շվեդիայի ռեզիդենտը վարձատրություն է ստանում Շվեդական ավիատրոնների համակարգ (SAS) օդային փոխադրումների կոնտրոլումի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող օդանավում կատարվող աշխատանքի դիմաց, այդ վարձատրությունը ենթակա է հարկման միայն Շվեդիայում:

**Հոդված 15
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ**

Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացած տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

**Հոդված 16
ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ**

1. Անկախ 14-րդ հոդվածի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 14-րդ հոդվածի դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

**Հոդված 17
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ**

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և համանման այլ վճարումները, սոցիալական ապահովագրության օրենսդրության շրջանակներում տրամադրվող փոխհատուցումները և անուիտետները կարող են հարկվել միայն առաջինը նշված Պայմանավորվող պետությունում:

2. «Անուիտետ» տերմինը նշանակում է՝ որոշակի գումար, որը սահմանված ժամկետներում պարբերաբար ենթակա է վճարման ամբողջ կյանքի ընթացքում կամ որոշված կամ սահմանելի ժամանակահատվածում՝ որպես դրամով կամ դրամական արտահայտությամբ համարժեք և ամբողջական փոխհատուցման դիմաց վճարում կատարելու պարտավորությանը:

**Հոդված 18
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները, որոնք կենսաթոշակ չեն, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում և այդ Պետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից, ով:

i) այդ Պետության քաղաքացի է կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրության նկատմամբ:

**Հոդված 19
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

Ուսանողը կամ փորձնակը, որոնք հանդիսանում են կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որոնք գտնվում են առաջինը նշված Պետությունում բացառապես իրենց ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չեն հարկման այդ Պետությունում իրենց ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

**Հոդված 20
ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտները, որոնք նշված չեն սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է եկամուտը, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնք նշված չեն սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում և առաջանում են մյուս Պայմանավորվող պետությունում, կարող են հարկվել այդ Պետությունում:

**Հոդված 21
ԳՈՒՅՔ**

1. Գույքը, որը ներկայացված է 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով, պատկանում է Պայմանավորվող պետության ռեզիդենտին և գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Գույքը, որը ներկայացված է Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետության մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի տեսքով, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Գույքը, որը ներկայացված է Պայմանավորվող պետության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով և օդանավերով և նման նավերի և օդանավերի շահագործման հետ կապված շարժական գույքով, ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

Սկանդինավյան ավիաուղիների համակարգ (SAS) օդային փոխադրումների կոնսորցիումի գույքի նկատմամբ սույն կետի դրույթները կիրառվում են միայն այդ կոնսորցիումի մեջ SAS Sverige AB-ի՝ SAS-ում շվեդական գործընկերոջ մասնակցությանը համապատասխանող գույքի մասով:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի այլ տեսակները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

5. Եթե, 4-րդ պարբերության համաձայն, Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող անձի գույքի հարկման իրավունքը պատկանում է միայն այդ Պետությանը, ապա այդպիսի գույքը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ գուտ գույքը ենթակա չէ գուտ գույքի ընդհանուր հարկման՝ առաջինը նշված Պետության օրենսդրության համաձայն:

Հոդված 22

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) Երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, կարող են հարկվել Շվեդիայում, Հայաստանը թույլ է տալիս.

i) այդ ռեզիդենտի եկամտային հարկից հանել Շվեդիայում վճարված հարկին հավասար գումար,

ii) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել Շվեդիայում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն այդպիսի նվազեցումները երկու դեպքում էլ չպետք է գերազանցեն մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը վերաբերում է, հանգամանքներից կախված, այն եկամտին կամ գույքին, որը կարող էր հարկվել Շվեդիայում:

բ) Երբ, սույն Կոնվենցիայի որևէ դրույթի համաձայն, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատվում է հարկումից, ապա Հայաստանը, համենայն դեպս, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

2. Շվեդիայի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) Երբ Շվեդիայի ռեզիդենտն ստանում է եկամուտ, որը Հայաստանի օրենքներով և սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, կարող է հարկվել Հայաստանում, Շվեդիան Շվեդիայի, օտարերկրյա հարկի հաշվանցման վերաբերյալ օրենքների (որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ առանց փոփոխելու ընդհանուր սկզբունքները) դրույթների համաձայն, պետք է թույլ տա նվազեցնել այդպիսի եկամտի հարկից Հայաստանում այդ եկամտի համար գանձված հարկի գումարի չափով:

բ) Երբ Շվեդիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, ենթակա է հարկման միայն Հայաստանում, ապա Շվեդիան շվեդական հարկի սահմանային դրույքաչափը որոշելու ժամանակ կարող է հաշվի առնել այն եկամտի չափը, որը ենթակա է հարկման միայն Հայաստանում:

գ) Չնայած սույն պարբերության «ա» ենթակետի դրույթներին՝ Հայաստանի ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժինները, որոնք վճարվում են Շվեդիայի ռեզիդենտ ընկերությանը, պետք է ազատված լինեն շվեդական հարկից՝ համաձայն շվեդական օրենքի դրույթների, որը կարգավորում է օտարերկրյա ընկերությունների կողմից շվեդական ընկերություններին վճարվող շահաբաժինների հարկումից ազատման հարցերը:

դ) Երբ Շվեդիայի ռեզիդենտին պատկանում է գույք, որը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, կարող է հարկվել Հայաստանում, Շվեդիան թույլ է տալիս այդ ռեզիդենտի գույքահարկից նվազեցում Հայաստանում վճարված հարկի գումարի չափով: Այնուամենայնիվ, այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված շվեդական գույքահարկի այն մասը, որը համապատասխանում է այն գույքին, որը կարող էր հարկվել Հայաստանում:

Հոդված 23

ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որևէ այլ կամ առավել ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն է կամ դրա հետ կապված պահանջները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության քաղաքացիները մինևույն հանգամանքներում, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող, թե նա մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով պիտի տրամադրի այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը չնորհում է իր ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետերի դրույթները, տոկոսները, ռոյալթիին և Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից կատարված այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթը որոշելու

նպատակով, ենթակա են նվազեցման այն նույն պայմաններով, որոնցով նվազեցվում են առաջինը նշված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող գույքը որոշելու նպատակով պետք է ենթակա լինի նվազեցման այն նույն պայմաններով, ինչ պայմաններով նվազեցվում է պարտքը առաջինը նշված Պետության ռեզիդենտին:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պայմանավորվող պետությունում ենթարկվեն որևէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն է կամ դրա հետ կապված պահանջները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը նշված Պայմանավորվող պետության այլ նման ձեռնարկությունները:

5. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ:

Հոդված 24

ՓՈԽՀԱՄԱՍՏԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է ինքը, կամ, եթե իր գործը վերաբերում է 23-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է: Գործը պետք է ներկայացվի Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Իրավասու մարմինը, եթե դիմումը համարի հիմնավորված և եթե չկարողանա հանգել գոհացուցիչ որոշման, կձգտի գործը կարգավորել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով խուսափելու սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումից: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն կարգավորել ցանկացած դժվարություն կամ տարաձայնություն, որոնք կարող են առաջանալ Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են խորհրդակցել նաև Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում՝ կրկնակի հարկումը վերացնելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են միմյանց հետ հաղորդակցվել ուղղակիորեն՝ նախորդ կետերի իմաստով համաձայնության հասնելու նպատակով:

5. Այն դեպքում, երբ.

ա) 1-ին ենթակետի համաձայն՝ անձը Պայմանավորվող պետության իրավասու մարմնին է ներկայացրել գործ այն հիմքով, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցրել են այդ անձի համար սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, և

բ) իրավասու մարմինները, մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին գործը ներկայացնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, չեն կարողանում համաձայնության գալ 2-րդ կետով սահմանված կարգով այդ գործը կարգավորելու համար, ապա այդ գործից բխող ցանկացած չլուծված խնդիր պետք է ներկայացվի արբիտրաժ, եթե անձը դա պահանջի: Այնուամենայնիվ, այդ չլուծված խնդիրները չեն կարող ներկայացվել արբիտրաժ, եթե Պետություններից որևէ մեկի դատարանի կամ վարչական ատյանի կողմից արդեն իսկ կայացվել է որոշում: Բացառությամբ այն դեպքերի, եթե գործին ուղղակիորեն առնչություն ունեցող անձը չի ընդունում արբիտրաժային որոշումը կատարելու փոխադարձ համաձայնությունը, այդ որոշումը պարտադիր է երկու Պայմանավորվող պետությունների համար և պետք է իրականացվի՝ անկախ այդ Պետությունների ներքին օրենքներով սահմանված ժամանակային սահմանափակումից: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ կարգավորել սույն կետի կիրառման կարգը:

6. ա) 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում այն դեպքերի նկատմամբ, որոնք նշված են 4-րդ հոդվածի 3-րդ կետում, կամ, 7-րդ հոդվածի համաձայն, մշտական հաստատությանը գույքի վերագրման խնդիրների առնչությամբ:

բ) Չնայած 5-րդ կետի դրույթներին՝ գործը չի կարող ներկայացվել արբիտրաժ, եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները եկել են համաձայնության առ այն, որ նշված գործը ցանկալի չէ լուծել արբիտրաժի միջոցով:

Հոդված 25

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ ներքին օրենքների կիրառման կամ կատարման համար Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների անունից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի վերաբերյալ այն չափով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին կետի համաձայն ստացած ցանկացած տեղեկություն դիտարկվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենքներին համապատասխան ստացած տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Չնայած վերոգրյալին՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը թույլատրվում է Պայմանավորվող պետությունների օրենքների համաձայն, և տրամադրող Պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

- ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ.
- բ) տրամադրել տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչարարության ընթացքում.
- գ) տրամադրել տեղեկություններ, որոնք բացահայտում են որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կուլտուրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ պահանջված տեղեկություններն ստանալու համար, նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պայմանավորվող պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը ենթակա է 3-րդ կետով նախատեսված սահմանափակման, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի այդպիսի տեղեկությունների նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը թույլտվություն՝ մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատությունը, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ ինստիտուտը, կամ՝ որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

Հոդված 26
ՕԳՈՒՏՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

1. Չնայած սույն Կոնվենցիայի ցանկացած այլ դրույթի՝ այն դեպքում, երբ.
- ա) Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը եկամուտ է ստանում հիմնականում այլ պետություններից՝
 - (i) այնպիսի գործունեությունից, ինչպիսիք են բանկային, փոխադրական, ֆինանսական կամ ապահովագրական գործունեությունը, կամ
 - (ii) հանդիսանում է գլխամաս, համակարգող կենտրոն կամ նմանատիպ մարմին, որոնք վարչական ծառայություններ են մատուցում կամ այլ տիպի աջակցություն ցուցաբերում այնպիսի ընկերությունների խմբի, որոնք ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում հիմնականում այլ պետություններում, և
 - բ) նման եկամուտը կհանգեցնի բավականին ցածր հարկման՝ այդ պետության օրենքների համաձայն, քան այն եկամուտն է, որն ստացվում է այդ պետությունում համանման գործունեություն իրականացնելու դեպքում կամ գլխամաս, համակարգող կենտրոն կամ նմանատիպ մարմիններ հանդիսանալու պարագայում, որոնք մատուցում են վարչական ծառայություններ կամ այլ տիպի աջակցություն են ցուցաբերում այնպիսի ընկերությունների, որոնք գործունեություն են իրականացնում այդ պետությունում, սակայն այդպիսի ընկերության եկամտի և նրա կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ չպետք է կիրառվեն սույն Կոնվենցիայով նախատեսված՝ հարկերից ազատման կամ նվազեցման դրույթները:

Հոդված 27

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող պետություններն աջակցություն կցուցաբերեն միմյանց եկամտային հայցերի հավաքագրման գործում: Այդ աջակցությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանել սույն հոդվածի կիրառման եղանակը:

2. «Եկամտային հայց» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ Պայմանավորվող պետության, նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանությունների կողմից սահմանված՝ ցանկացած տեսակի և բնույթի հարկի գծով առաջացած ապառքի գումար՝ այնքանով, ինչքանով այդպես սահմանված հարկումը չի հակասում սույն Կոնվենցիայի կամ ցանկացած այլ միջազգային պայմանագրի, որի մասնակից են Պայմանավորվող պետությունները, ինչպես նաև՝ այդպիսի գումարի հետ կապված տոկոսներ, վարչական տույժեր և հավաքագրման կամ պահման ծախսեր:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը պետք է ապահովվի այդ Պետության օրենքներով և վերաբերում է այն անձի ապառքին, որն այդ պահին այդ Պետության օրենքներով չի կարող կանխել դրա հավաքագրումը, այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմինների պահանջով, գանձման նպատակով պետք է ընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինների կողմից: Այդ եկամտային հայցը կհավաքագրվի այդ մյուս Պետության կողմից՝ նրա սեփական հարկերի հարկադրման և հավաքագրման համար կիրառվող օրենքների դրույթների համաձայն, այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը այնպիսի հայց է, որի վերաբերյալ այդ Պետությունը կարող է, իր օրենքի համաձայն, հավաքագրումն ապահովելու համար պահպանման միջոցներ ձեռնարկել, ապա այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմնի պահանջով, պետք է ընդունվի մյուս Պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով: Այդ մյուս Պետությունը պետք է պահպանման միջոցներ ձեռնարկի այդ եկամտային հայցի առնչությամբ՝ իր օրենքների դրույթների համաձայն, այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը, եթե նույնիսկ այդ միջոցների կիրառման պահին եկամտային հայցը հարկադրված չէ կատարման առաջինը նշված Պետությունում, կամ ապառքը վերաբերում է այն անձին, որն իրավունք ունի կանխելու դրա հավաքագրումը:

5. Անկախ 3-րդ և 4-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ կամ 4-րդ կետերի նպատակներով ընդունված եկամտային հայցը ենթակա չէ այդ Պետությունում այդ Պետության օրենքներով եկամտային հայցի նկատմամբ՝ իր բնույթի հիման վրա կիրառելի ժամանակային սահմանափակման կամ վերապահված որևէ գերակայության: Բացի այդ՝ 3-րդ կամ 4-րդ կետերի նպատակներով Պայմանավորվող պետության կողմից ընդունված եկամտային հայցը չի կարող այդ Պետությունում ունենալ որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով:

6. Պայմանավորվող պետության եկամտային հայցի գոյության, հիմնավորվածության կամ գումարի վերաբերյալ դատական գործերը չպետք է ներկայացվեն մյուս Պայմանավորվող պետության դատարան կամ վարչական մարմին:

7. Եթե Պայմանավորվող պետության կողմից 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված պահանջները ներկայացվելուց հետո՝ ցանկացած պահի, և նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամտային հայցի հավաքագրումն ու փոխանցումը առաջինը նշված Պետությանը այդ եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ՝

ա) 3-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում, երբ առաջինը նշված Պետության եկամտային հայցը, որը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենքներով, և ապառքը վերաբերում է այն անձին, որն այդ պահին չի կարող, այդ Պետության օրենքների համաձայն, կանխել դրա հավաքագրումը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում, երբ առաջինը նշված Պետության եկամտային հայցը, որի առնչությամբ այդ Պետությունը կարող է, իր օրենքների համաձայն, պահպանման միջոցներ ձեռնարկել դրա հավաքագրումն ապահովելու համար,

ապա առաջինը նշված Պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է ծանուցի մյուս Պետության իրավասու մարմինն այդ փաստի մասին, և, մյուս Պետության ընտրությամբ, առաջինը նշված Պետությունը պետք է կասեցնի կամ հետ վերցնի իր հայցը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցառումներ.

բ) իրականացնել պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող միջոցառումներ.

գ) ցուցաբերել աջակցություն, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի իրականացրել հավաքագրման կամ պահպանման համար, հանգամանքներից կախված, իր օրենքներով կամ վարչական պրակտիկայով ընդունված բոլոր ողջամիտ միջոցները.

դ) ցուցաբերել աջակցություն այն դեպքերում, երբ վարչական բեռն այդ Պետության համար բացահայտորեն համամասնական չէ մյուս Պայմանավորվող պետության կողմից ստացվող օգուտին:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չպետք է վերաբերի դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների:

**Հոդված 29
ՈՒԺԻ ՄԵՋ ՍՏՆԵԼԸ**

1. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը մյուսին գրավոր պետք է ծանուցի սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենքով պահանջվող ընթացակարգերը կատարելու մասին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինն ստանալուց հետո 30-րդ օրը, և նրա դրույթները գործում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարվող կամ հաշվանցվող գումարների համար,

բ) եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային տարում գանձվող հարկերի համար:

**Հոդված 30
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում մինչև Պայմանավորվող պետությունների կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ վեցամսյա ժամանակահատվածին հաջորդող տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո վճարված կամ հաշվանցված գումարների նկատմամբ,

բ) եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ վեցամսյա ժամանակահատվածին հաջորդող ամսաթվին հաջորդող տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային տարում գանձված հարկերի համար:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի փետրվարի 9-ին, երկու հավասարազոր բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, շվեդերեն և անգլերեն: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության և Շվեդիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» Կոնվենցիայի ստորագրման պահին Պայմանավորվող պետությունները համաձայնության եկան հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը.

5-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ

Համաձայնեցված է, որ «առաքում» հասկացությունը չի ներառում առաքման համար նախատեսված խանութներից վաճառքի իրականացումը:

7-րդ հոդվածի առնչությամբ

Համաձայնեցված է, որ մշտական հաստատությանը վերագրելի ծախսերի նվազեցման պայմանները սահմանվում են այն Պետության ներքին օրենսդրության համաձայն, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը՝ 23-րդ հոդվածի կանոններին համապատասխան (անխտրականություն):

11-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ

Համաձայնեցված է, որ Հայաստանի և ներկայումս (սույն Արձանագրության ստորագրման օրվա դրությամբ) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ հանդիսացող պետություններից որևէ մեկի հետ սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո որևէ այլ համաձայնագրով Հայաստանում առաջացող տոկոսների

համար Հայաստանում չհարկելու կամ ավելի ցածր դրույքաչափով հարկելու դրույթներ սահմանելու դեպքում այդ դրույթները կկիրառվեն սույն Կոնվենցիայով նախատեսված տոկոսների հարկման նկատմամբ: Համաձայնեցված է նաև, որ այդ դեպքում Հայաստանի իրավասու մարմինը անհապաղ կտեղեկացնի Շվեդիայի իրավասու մարմնին, որ տեղի են ունեցել փոփոխություններ՝ հանգեցնելով սույն պարբերության կիրառմանը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ համապատասխան կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի փետրվարի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, շվեդերեն և անգլերեն: Հայերեն և շվեդերեն տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 29-ին